

Պատասխաններ

IX-դասարան

1. Հայերենի առաջին ուսուցիչ Մեսրոպ Մաշտոցը ծնվել է 362-ին և վախճանվել 440-ին: Նրա մարմինը ամփոփվել է Օշականում՝ իր աշակերտ Վահան Ամատունու կալվածքում: Այդ գերեզմանը հայերիս սրբազան ուխտատեղին է: Գերեզմանի վրա կառուցվել է Մեսրոպ Մաշտոց եկեղեցին: Գրերի գյուտը Մաշտոցը կատարել է 405-ին, Եդեսիա քաղաքում: Այնուհետև նա սկսում է իր լուսավորական աշխատանքը. հիմնում է դպրոցներ, ուսուցանում աշակերտներին, ժողովրդի սեփականությունն է դարձնում հայոց այբուբենը, կատարում է թարգմանություններ Սուրբ գրքից, պատգամում՝ «Ճանաչել զիմաստություն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ »:

Մաշտոցի մահից հետո նրա աշակերտ Կորյունը հայոց վեհափառ Հովսեփ Ա Վայոցձորեցու պատվերով 443-450թ.թ. գրում է « Վարք Մաշտոցի» մատյանը՝ որպես Վդարի հոգևոր, մտավոր և մշակութային շարժման առաջին վավերագիր:

Կորյունը դեպքերի մասնակից է, ակնատես, ճշմարտախոս պատմիչ:

Մաշտոցի կերպարին անդրադարձել են շատերը, բայց գեղարվեստական գրականության անուրանալի արժեքներ են Սիամանթոյի «Սուրբ Մեսրոպ», Պ.Սևակի «Եվ այր մի՝ Մաշտոց անուն» պոեմները:

2. Հայ մեծ լուսավորիչ, հայ նոր գրականության հիմնադիր Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպը մեր ամենօրյա ավետարաններից է , որտեղ մեծ հայրենասերը «Հառաջաբան»-ում պատգամում է . «Մեկ ազգի պահողը , իրար հետ միացնողը լեզուն ա ու հավատը»:

«Ձեզ եմ ասում , ձե՛զ, հայոց նորահաս երիտասարդք, ձեր անումին մեռնիմ, ձեր արևին դուրբա՛ն, տասը լեզու սովորեցե՛ք, ձեր լեզուն , ձեր հավատը դայիմ բռնեցե՛ք »:

3. Հատվածի հեղինակը Եղիշե Չարենցն է: Հատվածը «Դեպի լյառն Մասիս» պոեմից է, նվիրված է Խաչատուր Աբովյանին:

4. Ութնյակը Միքայել Նալբանդյանի «Ազատություն» բանաստեղծությունից է:

Բանաստեղծությունը գրվել է 1859թ: Շրջասույթ՝ ազատության երգիչ:

Ազատությունը մարդու բնական վիճակն է, եթե Աստված ազատ է, ուրեմն ազատ պիտի լինի նաև մարդը: Ազատությունը անհատականություն ձևավորելու հիմնական ատաղձն է . առանց ազատության լուսավորություն լինել չի կարող....